# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

N°—Ե -03/102

«05» 09 2017թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի թիվ 34, որոշումը:

Առդիր 1 էջ:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ռ.Պապիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«01 » սեպտեմբերի 2017 թվականի N34 - Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-087-0011-0020 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ և ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ և ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական Ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, „Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին" ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հողի սեփականաշնորհման և տեղական հանձնաժողովի որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրենքի ուժով 06-087-0011-0020 ծածկագրի տակ գտնվող 0.14312 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Գեղամ Գրիգորի Երանոսյանի (ծնված 1962թ), Հասմիկ Սպարտակի Երանոսյանի(ծնված 1964թ) և Աղավնի Գեղամի Երանոսյանի (ծնված 1989թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
3. Վերականգնել և ճանաչել 0.14312հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1995թվականին կառուցված 257.24քմ բնակելի տան նկատմամբ ճանաչել Գեղամ Գրիգորի Երանոսյանի (ծնված 1962թ.) Հասմիկ Սպարտակի Երանոսյանի (ծնված 1964թ.) Աղավնի Գեղամի Երանոսյանի (ծնված 1989թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ գ.Շիրակամուտ, փողոց թիվ 9, թիվ 20 :

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ռ. Պապիկյան